ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 սեպտեմբերի 2010թ. թիվ 182-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի “բ” ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ կատարելու մասին» N 718-Ն որոշման, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2010թ. հուլիսի 14-ի թիվ 07-Ն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010թ. հուլիսի 13-ի “Հայաստանի Հանրապետության մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2005թ. նոյեմբերի 17-ի թիվ ԱՀ-19 և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2005թ. նոյեմբերի 17-ի թիվ 155-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին” թիվ 66-Ն համատեղ հրամանը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2006թ. հունվարի 24-ի թիվ 18-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՔՈՉԱՐՅԱՆ

2010թ. սեպտեմբերի 2
ք.Վանաձոր